




ՀՀ ԵՐԶԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀՀ ԸՆՆ «ՀԻՊՐՈՏԵՐԵԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ԴՈՍԿ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀՀ հիպրոտեքերնութարանության
և շրջակա միջավայրի
մոնիթորինգի արդյունքների մասին
2024թ. 2-րդ եռամսյակ



ԿԼԻՄԱ
ՕԴԵՐԵԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ
ՄԱԿԵՐԵԿՈՒԹԱՅԻՆ ԶՐԵՐ
ՍՏՈՐԵԿՐՅԱ ԶՐԵՐ
ԱՆՏԱՌՆԵՐ

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ.....	8
1. ԿԼԻՄԱ.....	11
2. ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ	20
3. ՄԹՆՈԼՈՐՏՍՅԻՆ ՕԴԻ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ	26
Երևան.....	28
Վանաձոր.....	33
Հրազդան.....	39
Կապան.....	41
Քաջարան.....	42
Չարենցավան.....	43
Ծաղկաձոր.....	44
Եվրոպայում մեծ տարածությունների վրա օդի աղտոտիչների տարածման մոնիթորինգի և գնահատման համատեղ ծրագիր	46
4. ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՔԱՂՑՐԱՀԱՄ ՋՐԵՐ	48
Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք.....	49
Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք.....	52
Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք.....	57
Սևանի ջրավազանային կառավարման տարածք.....	62
Սևանա լիճ.....	67
Հարավային ջրավազանային կառավարման տարածք.....	77
Ջրամբարներ.....	79
Արաքս գետ.....	80
5. ԱՆՏԱՌՆԵՐ.....	81
Հավելված 1. Միջին ամսական և տասնօրյակային ջերմաստիճաններն ու շեղումները 1961-1990թթ. համապատասխան նորմաներից 2024 թվականի 2-րդ եռամսյակում.....	85
Հավելված 2. Ամենաբարձր և ամենացածր ջերմաստիճանները 2024 թվականի 2-րդ եռամսյակում.....	88
Հավելված 3. Դիտակետերի տեղադրության ցանկ.....	90
Հավելված 4. Յուցանիշների ցանկ.....	108
Հավելված 5. Նորմերի և սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների ցանկ.....	111

Աղյուսակների ցանկ

Աղյուսակ 1. Երաշտի պայմանները գարնանը.....	15
Աղյուսակ 2. Վտանգավոր օդերևութաբանական երևույթներ, 2024թ. Ապրիլ.....	21
Աղյուսակ 3. Վտանգավոր օդերևութաբանական երևույթներ, 2024թ. Մայիս.....	23
Աղյուսակ 4. Վտանգավոր օդերևութաբանական երևույթներ, 2024թ. Հունիս.....	25
Աղյուսակ 5. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային տեղումներում որոշ ցուցանիշների կոնցենտրացիաները.....	45
Աղյուսակ 6. Ամբերդի մթնոլորտային տեղումներում որոշ ցուցանիշների կոնցենտրացիաները.....	47
Աղյուսակ 7. Հյուսիսային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.....	49
Աղյուսակ 8. Ախուրյանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.....	52
Աղյուսակ 9. Հրազդանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.....	57
Աղյուսակ 10. Սևանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.....	62
Աղյուսակ 11. Սևանա լճի ջրային հաշվեկշիռը 2024 թվականի 2-րդ եռամսյակում.....	67
Աղյուսակ 13. Արարատյան ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.....	73
Աղյուսակ 14. Հարավային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.....	77
Աղյուսակ 15. Ջրամբարների ջրալցվածությունը 2024 թվականի 2-րդ եռամսյակում.....	79

Գծապատկերների ցանկ

Գծապատկեր 1. Օդի ամսական, սեզոնային տեղումների քանակը.....	11
Գծապատկեր 2. Օդի միջին ամսական, սեզոնային ջերմաստիճանը	11
Գծապատկեր 3. Օդի ջերմաստիճանի շեղումները նորմայից զարնան սեզոնին՝ 1935-2024թթ. ...	12
Գծապատկեր 4. Մթնոլորտային տեղումների շեղումները նորմայից զարնան սեզոնին՝ 1935-2024թթ.	13
Գծապատկեր 5. Առավելագույն ջերմաստիճանները 2024 թվականի զարնանը	13
Գծապատկեր 6. Օրական առավելագույն ջերմաստիճանի նվազագույնի արժեքները 2024 թ զարնանը.....	14
Գծապատկեր 7. Օրական նվազագույն ջերմաստիճանի առավելագույն արժեքները	14
Գծապատկեր 8. Օրական նվազագույն ջերմաստիճանները	15
Գծապատկեր 9. Քամու արագությունը զարնանը.....	17
Գծապատկեր 10. Օդի հարաբերական խոնավությունը	18
Գծապատկեր 11. Մթնոլորտային ճնշումն ըստ բարձրությունների.....	18
Գծապատկեր 12. Օրական ջերմաստիճանները զարնանը Երևանում.....	19
Գծապատկեր 13. Ամսական տեղումների քանակը և դրանց շեղումները նորմայից (մմ).....	19
Գծապատկեր 14. Տեղումներ, ապրիլ 2024թ.	21
Գծապատկեր 15. Տեղումներ, մայիս 2024թ.	23
Գծապատկեր 16. Տեղումներ, հունիս 2024թ.	25
Գծապատկեր 17. Մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիայի փոփոխություններն ըստ քաղաքների	26
Գծապատկեր 18. Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի կոնցենտրացիայի փոփոխություններն ըստ քաղաքների.....	27
Գծապատկեր 19. Մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիայի փոփոխություններն ըստ քաղաքների.....	27
Գծապատկեր 20. Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.....	28
Գծապատկեր 21. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.....	28
Գծապատկեր 22. Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օդնի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.....	29
Գծապատկեր 23. Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.....	32
Գծապատկեր 24. Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.....	32
Գծապատկեր 25. Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխություն.....	32
Գծապատկեր 26. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական.....	33
Գծապատկեր 27. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	33
Գծապատկեր 28. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.....	33
Գծապատկեր 29. ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	36
Գծապատկեր 30. ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	36
Գծապատկեր 31. ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	36
Գծապատկեր 32. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.....	39

Գծապատկեր 33. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.....	39
Գծապատկեր 34. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ազոտ երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.....	39
Գծապատկեր 35. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.....	40
Գծապատկեր 36. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.....	40
Գծապատկեր 37. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.....	41
Գծապատկեր 38. Կապան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.....	41
Գծապատկեր 39. Կապան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.....	41
Գծապատկեր 40. Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.....	42
Գծապատկեր 41. Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.....	42
Գծապատկեր 42. Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.....	43
Գծապատկեր 43. Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.....	43
Գծապատկեր 44. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.....	44
Գծապատկեր 45. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.....	44
Գծապատկեր 46. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.....	44
Գծապատկեր 47. Ամբերդի կայանում ամռնիակի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.....	46
Գծապատկեր 48. Փամբակ գետում ամռնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները.....	50
Գծապատկեր 49. Դեբեդ գետում մոլիբդենի կոնցենտրացիաների փոփոխությունները.....	50
Գծապատկեր 50. Ախթալա գետում պղնձի կոնցենտրացիաների փոփոխությունները.....	51
Գծապատկեր 51. Ախթալա գետում մոլիբդենի կոնցենտրացիաների փոփոխությունները.....	51
Գծապատկեր 52. Հյուսիսային ՋԿՏ-ի բնադրյուններում ջրի ծախսերի փոփոխությունները.....	51
Գծապատկեր 53. Մեծամոր գետում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները.....	52
Գծապատկեր 54. Ախուրյանի ՋԿՏ-ի բնադրյուններում ջրի ծախսերի փոփոխությունները.....	53
Գծապատկեր 55. Ախուրյանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի ծախսերի փոփոխությունները.....	54
Գծապատկեր 56. Ախուրյանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները.....	54
Գծապատկեր 57. Ախուրյանի ՋԿՏ-ի չշատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները.....	55
Գծապատկեր 58. Ախուրյանի ՋԿՏ-ի գրունտային ջրհորներում ջրի մակարդակների փոփոխությունները.....	55
Գծապատկեր 59. Ախուրյանի ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերի հանքայնացումը.....	55
Գծապատկեր 60. Ախուրյանի ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերում նիտրատ իոնի պարունակությունը.....	56
Գծապատկեր 61. Ախուրյանի ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերում սուլֆատ իոնի պարունակությունը.....	56

Գծապատկեր 62. Ախուրյանի ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերում արսենի պարունակությունը	56
Գծապատկեր 63. Քասախ գետում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	58
Գծապատկեր 64. Հրազդան գետում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները .	58
Գծապատկեր 65. Հրազդան գետում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները....	58
Գծապատկեր 66. Հրազդանի ՋԿՏ-ի բնադրյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները.....	59
Գծապատկեր 67. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ջրի ծախսերի փոփոխությունները	60
Գծապատկեր 68. Հրազդանի ՋԿՏ-ի չշատրվանոց հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները	61
Գծապատկեր 69. Հրազդանի ՋԿՏ-ի գրունտային ջրհորներում ջրի մակարդակների փոփոխությունները	61
Գծապատկեր 70. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները.....	63
Գծապատկեր 71. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում նիտրատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները.....	63
Գծապատկեր 72. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները.....	64
Գծապատկեր 73. Սևանի ՋԿՏ-ի բնադրյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները	65
Գծապատկեր 74. Սևանի ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները	65
Գծապատկեր 75. Մեծ Սևանում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	71
Գծապատկեր 76. Փոքր Սևանում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	71
Գծապատկեր 77. Մեծ Սևանում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները.....	71
Գծապատկեր 78. Փոքր Սևանում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները.....	72
Գծապատկեր 79. Արփա գետում մոլիբդենի կոնցենտրացիաների փոփոխությունները	74
Գծապատկեր 80. Արարարտյան ՋԿՏ-ի բնադրյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները	75
Գծապատկեր 81. Արարարտյան ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները	75
Գծապատկեր 82. Արարարտյան ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ջրի ծախսերի փոփոխությունները	75
Գծապատկեր 83. Արարարտյան ՋԿՏ-ի չշատրվանոց հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները	76
Գծապատկեր 87. Հարավային ՋԿՏ-ի բնադրյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները	78
Գծապատկեր 88. Երևանյան լճում նիտրիտ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	79
Գծապատկեր 89. Երևանյան լճում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	80

Հապավումներ

<i>ՄԹԿ</i>	<i>սահմանային թույլատրելի կոնցենտրացիա</i>
<i>ՋԿՏ</i>	<i>ջրավազանային կառավարման տարածք</i>
<i>ԸԱԱ</i>	<i>ընդհանուր անօրգանական ազոտ</i>
<i>ԸԼԱ</i>	<i>ընդհանուր լուծված աղեր</i>
<i>ԿՉՆ</i>	<i>կախութային չոր նյութեր</i>
<i>ԹԿՊ⁵</i>	<i>թթվածնի հնգօրյա կենսաբանական պահանջարկ</i>
<i>ԹՔՊ</i>	<i>թթվածնի քիմիական պահանջարկ</i>
<i>մ</i>	<i>մետր</i>
<i>մմ</i>	<i>միլիմետր</i>
<i>մ/վ</i>	<i>մետր վայրկյանում</i>
<i>մկգ/մ³</i>	<i>միկրոգրամ մեկ խորանարդ մետրում</i>
<i>մգ/լ</i>	<i>միլիգրամ մեկ լիտրում</i>
<i>մկՄմ/սմ</i>	<i>միկրոսիմենս մեկ սանիմետրում</i>
<i>հՊա</i>	<i>հեկտապասկալ</i>

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի («Հայհիդրոմետ» ՊՈԱԿ) 2024 թվականի 2-րդ եռամսյակի տեղեկագրում ներկայացված են կլիմայական նկարագրության, եղանակային երևույթների, մթնոլորտային օդի որակի, մթնոլորտային տեղումների որակի և քանակի, մակերևութային և ստորերկրյա քաղցրահամ ջրերի որակի և քանակի, հողային ծածկույթի, անտառների մոնիթորինգի վերաբերյալ տեղեկատվություն:

«Հայհիդրոմետ» ՊՈԱԿ-ի աշխատանքային ծրագրերը կազմվում են կանոնադրության համաձայն և ղեկավարվելով հետևյալ հիմնական իրավական ակտերով.

❖ ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N1902-Լ որոշում:

❖ ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 30-ի ««Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2024-2026 թվականների ընթացքում կատարման ենթակա պետական նշանակության հիդրոոդերևութաբանական աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին» N826-Լ որոշում:

❖ ՀՀ կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման միջոցառումների 2024 թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին» N 1656-Ն որոշում:

❖ ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2021 թվականի հունիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության մակերևութային և ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետերի ցանկը հաստատելու և Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի ապրիլի 21-ի N 121-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1584-Ն հրաման:

Օդերևութաբանական դիտարկումներ կատարվում են հանրապետության տարածքի 42 (այդ թվում՝ 4 դժվարամատչելի և 2 մասնագիտացված) օդերևութաբանական կայանում, որից 40-ում համաժամանակյա իրականացվում են ավտոմատ դիտարկումներ: Դիտարկումներն իրականացվում են Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության կողմից սահմանված կարգով և միջազգային ստանդարտներին համապատասխան: Կատարվում են դիտարկումներ օդերևութաբանական բոլոր տարրերի նկատմամբ, ինչպիսիք են՝ օդի և հողի ջերմաստիճանը, մթնոլորտային ճնշումը, քամու ուղղությունը և արագությունը, օդի խոնավությունը, տեղումների քանակը, ամպամածության ձևը և քանակը, հորիզոնական տեսանելիությունը, մթնոլորտային երևույթները և այլ: Նորմաները հաշվարկված են բազմամյա դիտարկումների հիման վրա:

Մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են 15 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայանում, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետում, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ: Անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, փոշու, փոշու մեջ պարունակող մետաղների և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է

սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների կիրառմամբ համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշման:

Մակերևութային ջրերի քանակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է 91 դիտակետ (այդ թվում 80 գետային, 2 ջրանցքի, 5 ջրամբարային և 4 Սևանա լճի) Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) գետերի, ջրանցքների, ջրամբարների և Սևանա լճի վրա: 91 դիտակետում իրականացվում են ջրի և օդի ջերմաստիճանի, ջրի մակարդակի, սառցային երևույթների ամենօրյա դիտարկումներ: 80 գետային և 2 ջրանցքի դիտակետերում իրականացվում են ջրի ելքի չափումներ (տարեկան 25-35 անգամ): Հիդրոլոգիական դիտակետերից 9-ում տեղադրված են ջրի մակարդակի ավտոմատ մակարդակաչափեր (ռադարային կամ ինքնագրային):

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է ՀՀ 6 ջրավազանային կառավարման տարածքի գետերի, ջրամբարների, Արփա-Սևան, Որոտան-Կեչուտ ջրատարի և Սևանա լճի 151 դիտակետ: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական ավելի քան 45 ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ), տարեկան 5-12 անգամ հաճախականությամբ: Ջրի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011թ. հունվարի 27-ի N75-Ն որոշման:

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված են ՀՀ 6 ջրավազանային կառավարման տարածքի 119 ստորերկրյա ջրադրյուր: Ջրադրյուրներում կատարվում են ջրի ծախսի, մակարդակի/ճնշման և ջերմաստիճանի դիտարկումներ՝ ամսական 6 անգամ հաճախականությամբ: Տարեկան 2 անգամ կատարվում է նաև ստորերկրյա ջրերի որակի մոնիթորինգ 55 ջրադրյուրում, որոնցից յուրաքանչյուրում որոշվում է շուրջ 40 ցուցանիշ (հիմնական անիոններ և կատիոններ, մետաղներ, աղային ռեժիմի տարրեր): Ստորերկրյա քաղցրահամ ջրերի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2002թ. դեկտեմբերի 25-ի N876-Ն հրամանի:


Կոմունալ աղբավայրերի հարակից տարածքներում կայուն օրգանական աղտոտիչների պարունակությունները որոշելու համար կատարվում են հողի նմուշառումներ: Յուրաքանչյուր նմուշում որոշվում են մինչև 19 քլորօրգանական պեստիցիդներ և 24 պոլիքլորացված բիֆենիլներ: Կատարված դիտարկումների արդյունքները հրապարակվում են տարեկան տեղեկագրում:

ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ տարածությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին» կոնվենցիայի «Եվրոպայում մեծ տարածությունների վրա օդի աղտոտիչների տարածման մոնիթորինգի և գնահատման» (EMEP) ծրագրի շրջանակներում ՀՀ-ում գործում է մթնոլորտային օդի անդրսահմանային աղտոտվածության մոնիթորինգի առաջին մակարդակի տարածաշրջանային դիտակայան (Ամբերդի դիտակայան): Դիտակայանի մթնոլորտային օդի և մթնոլորտային տեղումների որակի մոնիթորինգի արդյունքները ներկայացվում են կոնվենցիայի քիմիական կոորդինացիոն կենտրոն, որը գործում է Նորվեգիայի օդի հետազոտության ինստիտուտի ներքո: Մոնիթորինգի և արտանետումների տվյալների հիման վրա Նորվեգիայի օդերևութաբանական ինստիտուտի կողմից կատարվում է օդի անդրսահմանային աղտոտման մոդելավորում և պատրաստվում է Հայաստանի Հանրապետության համար տարեկան զեկույց:


Մակերևութային և ստորերկրյա ջրերի որակի և քանակի մոնիթորինգի դիտակետերի ցանկը հաստատվել է համաձայն ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2021 թվականի հունիսի 15-ի N212-Լ հրամանի:

1. ԿԼԻՄԱ

2024 թվականի գարունը դասվեց «տաք և խոնավ» գարունների շարքում, այն յոթերորդ տաք ու խոնավն էր սկսած 1935 թվականից: Գարնան միջին սեզոնային ջերմաստիճանը (6.4 °C), նորմայից (1961-1990թթ) բարձր էր 2.0°C -ով, սեզոնային գումարային տեղումների քանակը կազմել է 268.2 մմ, որը կազմում է նորմայի 127.1 %:



Գծապատկեր 2. Օդի միջին ամսական, սեզոնային ջերմաստիճանը




Գծապատկեր 1. Օդի Ամսական, սեզոնային տեղումների քանակը

Մարտ: 2024 թվականի մարտը տաք էր և խոնավ: Ամսական միջին ջերմաստիճանը (0.7°C), գերազանցեց 1961-1990 թթ նորման (-1.4°C) 2.1°C -ով: Հանրապետության ողջ տարածքում ամսվա երկրորդ տասնօրյակից սկսած դիտվում էին նորմայի նկատմամբ դրական շեղումներով ջերմաստիճաններ: Ամիսն աչքի ընկավ նաև տեղումների առատ քանակով՝ 83.5 մմ, որը կազմել է 1961-1990 թթ նորմայի (52 մմ) 160.6 %-ը: Այն վեցերորդ խոնավ մարտն էր սկսած 1935 թվականից:

Ապրիլ: 2024 թվականի ապրիլը եղավ «ամենատաքը» և «ամենաչորը» դիտարկումների ողջ պատմության ընթացքում՝ սկսած 1935 թվականից: Ամսական միջին ջերմաստիճանը՝ 9.4°C, գերազանցեց 1961-1990 թթ նորման (4.9°C) 4.5°C-ով: Ընդհանուր առմամբ հանրապետության ողջ տարածքում ամսվա սկզբից դիտվում էին նորմայի նկատմամբ դրական շեղումներով ջերմաստիճաններ, սակայն շեղումները մեծ էին հատկապես երրորդ տասնօրյակում՝ հասնելով 5-7 աստիճան օրական նորմայի նկատմամբ: Ամսական տեղումների քանակը՝ 23.4 մմ, կազմել է 1961-1990 թթ նորմայի (71 մմ) ընդամենը 33%-ը: Շատ չորային էր հատկապես երրորդ տասնօրյակը, որոշ տարածքներում դիտվել են նույնիսկ տեղումների բացակայություն:


Մայիս: 2024 թվականի մայիսի միջին ամսական ջերմաստիճանը՝ 9.1°C, ցածր էր 1961-1990 թթ նորմայից (9.6°C) 0.5°C -ով: Ընդհանուր առմամբ հանրապետության ողջ տարածքում ամսվա երկրորդ տասնօրյակից սկսած դիտվում էին նորմայից ցածր ջերմաստիճաններ: Ցածր ջերմաստիճանները ուղեկցվում էին առատ տեղումներով, ամսական տեղումների քանակը՝ 161.3 մմ կազմել է 1961-1990 թթ նորմայի (88 մմ) 183.3 %-ը: 2024 թվականի մայիսը երկրորդ տեղումնառատն էր սկսած 1935 թվականից: Մայիսի 25-26-ը Լոռիում, Տավուշում, Կոտայքում և Արագածոտնում դիտվեցին առատ տեղումներ, երբ օրական տեղումների քանակը տարբեր օդերևութաբանական կայաններում հասավ մինչև 30-50 մմ: Դիլիջանում և մի քանի այլ օդերևութաբանական կայաններում գրանցվեցին օրական տեղումների քանակի նոր ռեկորդներ մայիս ամսվա համար: Այս օրերի առատ տեղումները բերեցին աղետալի հեղեղումների Դեբեդ և Աղստև գետերի ավազաններում:




Նկար 1. Օդի ջերմաստիճանի շեղումը նորմայից

Նկար 2. Մթնոլորտային տեղումների շեղումը նորմայից

Գարնան միջին ջերմաստիճանի աճը 1935-2024 թթ. կազմել է 2.0°C, իսկ տեղումները նվազել են 12 %-ով:




Գծապատկեր 3. Օդի ջերմաստիճանի շեղումները նորմայից գարնան սեզոնին՝ 1935-2024թթ.



Պատկեր 4. Մթնոլորտային տեղումների շեղումները նորմայից գարնան սեզոնին՝ 1935-2024թթ.


Կլիմայական ինդեքսներ

2024 թվականի գարնանը սեզոնին դիտված առավելագույն ջերմաստիճանները (TXx) առանձին կայաններում հասել են 30°C-ի և նորմայից բարձր են եղել միջինում 2.6°C-ով, իսկ առավել զգալի շեղումները նորմայից դիտվել են Որոտանի լեռնանցքում՝ 4.8°C-ով, Շորժայում՝ 4.7°C-ով, Գյումրիում՝ 4.4°C-ով: Դրական շեղումները զգալիորեն մեծ են եղել ապրիլ ամսին: Ապրիլի 17-20-ը և 28-30-ը ընկած ժամանակահատվածում գրանցվեցին նոր օրական ջերմաստիճանային ռեկորդներ, երբ ջերմաստիճանները Երևանում և Արարատյան դաշտում հասան 30-32°C-ի:




Պատկեր 5. Առավելագույն ջերմաստիճանները (°C, TXx) 2024 թվականի գարնանը (կարմիր) և նորման (կապույտ)

Օրական առավելագույն ջերմաստիճանի ամսական նվազագույնի մեծությունը (TXn) 2024թ. գարնանը նորմայից բարձր է դիտվել միջինում 1.3°C-ով, առավելագույն դրական շեղումը եղել է Շորժայում՝ 2.8°C, Ծաղկահովիտում՝ 2.7°C: Բացասական շեղում է գրանցվել Օձունում՝ -0.3°C և Բազատաշենում՝ -0.7°C: Մայիս ամսին կայանների մեծ մասում գրանցվել են TXn-ի բացասական շեղումներ:




Փճապատկեր 6. Օրական առավելագույն ջերմաստիճանի նվազագույնի արժեքները (TNx) 2024 թ գարնանը (կարմիր) և նորման (կապույտ)

2024 թթ. գարնանային սեզոնին դիտված նվազագույն ջերմաստիճանների առավելագույն արժեքը (TNx)-ը նորմայից բարձր է եղել միջինում 0.8°C-ով, իսկ առավել զգալի շեղումները նորմայից դիտվել է Թալինում՝ 3.4°C-ով, Ամբերդում՝ 3.0°C-ով, Շորժայում՝ 2.4°C-ով: Որոշ կայաններում գրանցվել են բացասական շեղումներ:



Փճապատկեր 7. Օրական նվազագույն ջերմաստիճանի առավելագույն արժեքները (TNx) 2024 թ. գարնանը (կարմիր) և նորման (կապույտ)

2024 թվականի գարնանային սեզոնին դիտված նվազագույն ջերմաստիճանները (TNn) առանձին լեռնային կայաններում կազմել են -7-ից -12°C: Այնուամենայնիվ, նվազագույն ջերմաստիճանները նորմայից բարձր են եղել միջինում 2.1°C-ով, իսկ առավել զգալի շեղումները նորմայից դիտվել է Թալինում՝ 3.4°C-ով, Ամբերդում՝ 3.9°C-ով, Մասրիկում՝ 3.9°C-ով: Նորմայի նկատմամբ դրական շեղումները զգալիորեն մեծ են եղել ապրիլ ամսին, իսկ մայիսին կայանների մեծ մասում գրանցվել են բացասական շեղումներ: Մայիսի 17-18-ը Հանրապետության օդերևութաբանական կայանների զգալի մասում դիտվեցին նոր օրական բացարձակ նվազագույն ջերմաստիճաններ՝ Լոռիում և Շիրակում օրական նվազագույն ջերմաստիճանները կազմեցին -2-ից -4°C:



Պատկեր 8. Օրական նվազագույն ջերմաստիճանները (TN) 2024 թ. գարնանը (կարմիր) և նորման (կապույտ)

Ապրիլ-մայիս ամիսների երաշտային պայմանների վերլուծությունը

2024 թվականի երաշտային պայմանների ապրիլ-մայիս ամիսներին ինտենսիվության մոնիթորինգ իրականացվել է 38 կայանների տվյալների հիման վրա, որոնք բնութագրական են Հայաստանի տարածքի համար: Օդերևութաբանական երաշտի գնահատումը իրականացվել է համաձայն «Հայաստանի Հանրապետության տարածքում տարբեր ինտենսիվության երաշտային պայմանների հաշվարկման ցուցանիշները և մեթոդաբանությունը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 08.06.2023թ. 925-Ն որոշման պահանջների և առանձնացվել է երաշտի 5 կարգ՝ 1-շատ ուժեղ, 2-ուժեղ, 3-միջին, 4-թույլ և 5-երաշտի բացակայություն:

Աղյուսակ 1. Երաշտի պայմանները գարնանը

Մարզ	Կայան	01.04-10.04	11.04-20.04	21.04-30.04	01.05-10.05	11.05-20.05	21.05-31.05
Շիրակ	Գյումրի	5	5	5	5	5	5
	Ամասիա	5	5	3	5	5	5
	Արթիկ	5	5	3	5	5	5
	Աշոցք	5	5	5	5	5	5
Լոռի	Օձուն	5	5	3	5	5	5
	Տաշիր	5	5	5	5	5	5
	Վանաձոր	5	5	3	5	5	5
	Ստեփանավան	5	5	5	5	5	5
Տավուշ	Բագրատաշեն	5	5	2	5	5	5
	Իջևան	5	5	3	5	5	5
	Դիլիջան	5	5	5	5	5	5
Գեղարքունիք	Սևան	5	5	5	5	5	5
	Սեյունովկա	5	5	5	5	5	5
	Գավառ	5	5	5	5	5	5
	Շորժա	5	5	5	5	5	5
	Մարտունի	5	5	5	5	5	5
	Ճամբարակ	5	5	5	5	5	5
	Մասրիկ	5	5	5	5	5	5
Կոտայք	Հրազդան	5	5	5	5	5	5
	Եղվարդ	5	5	1	5	5	5
	Ֆանտան	5	5	4	5	5	5

Մարզ	Կայան	01.04-10.04	11.04-20.04	21.04-30.04	01.05-10.05	11.05-20.05	21.05-31.05
Արագածոտն	Թային	5	5	4	5	5	5
	Ապարան	5	5	5	5	5	5
	Աշտարակ	5	5	1	5	5	5
	Ամբերդ	5	5	4	5	5	5
	Ծաղկահովիտ	5	5	5	5	5	5
Վայոց Ձոր	Արենի	5	5	3	5	5	5
	Ջերմուկ	5	5	5	5	5	5
Սյունիք	Միսիան	5	5	5	5	5	5
	Գորիս	5	5	5	5	5	5
	Կապան	5	5	5	5	5	5
	Մեղրի	5	5	4	4	5	5
Արարատ	Արարատ	5	5	3	4	4	5
	Ուրցաձոր	5	5	2	5	5	5
	Անանուն լ/ցք	5	5	5	5	5	5
	Արտաշատ	5	5	2	3	4	5
Արմավիր	Արմավիր	5	5	2	4	5	5
	Մերձավան	5	5	3	5	5	5


1 – շատ ուժեղ, 2 – ուժեղ, 3 – միջին, 4 – թույլ, 5 – երաշտի բացակայություն

Ինչպես երևում է աղյուսակից, գրեթե, բոլոր կայաններում ապրիլ-մայիս ամիսներին երաշտ չի դիտվել, բացառությամբ ապրիլի երրորդ տասնօրյակի: Ապրիլի երրորդ տասնօրյակին Եղվարդի և Աշտարակի կայաններում եղել է շատ ուժեղ (1-ին կարգ) երաշտ, իսկ հովտային շրջանների (Բագրատաշեն, Ուրցաձոր, Արմավիր, Արտաշատ) կայաններում՝ ուժեղ (2-րդ կարգ):

Այսպիսով, զարնանը միայն ապրիլի երրորդ տասնօրյակին է, որ առանձին ցածրադիր կայաններում դիտվել է երաշտային պայմաններ:

Արեգակնային ճառագայթում


2024 թվականի զարնան ամիսների արեգակնային ուղիղ ճառագայթման բաշխման քարտեզներից երևում է, որ մարտին գրանցված արժեքները ամենացածրն են զարնան սեզոնի ընթացքում: Մարտին նվազագույն արժեքներ գրանցվել են հանրապետության հյուսիս-արևելյան շրջաններում: Գարնան երեք ամիսներին առավելագույն արժեքներով աչքի է ընկել Արարատյան դաշտը: Ապրիլին գրանցվել է արեգակնային ուղիղ ճառագայթման առավելագույն արժեքներ՝ առանձին շրջաններում հասնելով մինչև 200 Վտ/մ²:



Մակերևույթի ուղիղ ճառագայթում (Վտ/մ²)
 Գարձալիք ճառագայթման արժեքները (Վտ/մ²) ըստ արբանյակային դիտարկումների մարտ, ապրիլ և մայիս ամիսներին (ձախից աջ հերթականությամբ)

Քամու բաշխում

Գարնան սեզոնին քամու միջին արագությունը հովտային շրջաններում՝ 500-800մ բարձրություններում գրանցվել է 1.5 մ/վ, 800-1000մ բարձրություններում՝ 1.2 մ/վ: Ամենամեծ արագությամբ քամի արձանագրվել է 2500 մ-ից ավել բարձրալեռնային գոտում՝ 4.9 մ/վ, ինչը նորմայից ավել է 0.2 մ/վ-ով:




Բարձրություն, մ	Արագություն, մ/վ		
	Գարուն	Նորմա	Շեղում
500-800	1.5	1.4	0.1
800-1000	1.2	1.3	-0.1
1000-1500	1.4	1.4	0.0
1500-2000	1.7	1.9	-0.2
2000-2500	3.0	3.1	-0.1
2500 - ավել	4.9	4.7	0.2

Գծապատկեր 9. Քամու արագությունը գարնանը

Օդի հարաբերական խոնավություն

2024 թ. գարնան հարաբերական խոնավությունը բոլոր բարձրություններում եղել է նորմայից բարձր, բացառությամբ 800-1000 մ գոտու, որտեղ հարաբերական խոնավությունը դիտվել է նորմայից ցածր:




Բարձրություն, մ	Հարաբերական խոնավություն, %	
	Գարուն	Նորմա
500-800	72.1	70.2
800-1000	57.9	59.0
1000-1500	69.1	67.9
1500-2000	75.2	71.7
2000-2500	76.5	74.7

Գծապատկեր 10. Օդի հարաբերական խոնավությունը

Մթնոլորտային ճնշում

2024 թ. գարնան մթնոլորտային ճնշումը ցածրադիր վայրերում եղել է նորմային մոտ, իսկ 1500-2500 մ բարձրություններում՝ նորմայից ավել:



Բարձրություն	Մթնոլորտային ճնշում, հՊա	
	Գարուն	Նորմա
500-800	945.4	945.1
800-1000	916.0	915.7
1000-1500	878.2	877.7
1500-2000	819.0	818.0
2000-2500	773.9	772.8




Գծապատկեր 11. Մթնոլորտային ճնշումն (հՊա) ըստ բարձրությունների

Երևան

Մարտ ամսին միջին ջերմաստիճանը Երևանում նորմայից բարձր էր 0.9°C-ով: Տեղումների քանակը եղել է 54.8 մմ, որը կազմում է մարտ ամսվա նորմայի 203 %-ը:




Ապրիլ ամսին միջին ջերմաստիճանը Երևանում նորմայից բարձր էր 4.2°C-ով: Ապրիլի 5, 18-19, 20, 29 և 30-ին գրանցվել են նոր օրական բացարձակ առավելագույն ջերմաստիճաններ: Տեղումների քանակը կազմել է 25 մմ, որը կազմում է ապրիլ ամսվա նորմայի 53 %-ը:

Մայիս ամսին միջին ջերմաստիճանը Երևանում նորմայից ցածր էր 4.1°C-ով: Տեղումների քանակը կազմել է 91.2 մմ, որը կազմում է մայիս ամսվա նորմայի 203 %-ը: Դիտվել է չորրորդ ամենախոնավ մայիսը 1966-2024 թթ. տարիների շարքում:



— Օրական առավելագույն — Օրական նվազագույն — Օրական միջին
● Առավելագույն օրական (երբևէ դիտված) ● Առավելագույն օրական (երբևէ դիտված)

Գծապատկեր 12. Օրական ջերմաստիճանները գարնանը Երևանում




Գծապատկեր 13. Ամսական տեղումների քանակը և դրանց շեղումները նորմայից (մմ) Երևանում

2. ՕՂԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ապրիլ


2024թ. ապրիլին օդի ամսական միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում բարձր է եղել նորմայից՝ 3-5 աստիճանով:



Նկար 3. Միջին ամսական ջերմաստիճանները և դրանց շեղումները նորմայից (նորմա՝ 1991-2020թթ.) ապրիլին


Ապրիլ ամսվա միջին տասնօրյակային ջերմաստիճանը առաջին և երկրորդ տասնօրյակում եղել է նորայից բարձր՝ 2-4, երկրորդ տասնօրյակում բարձր՝ 5-7 աստիճանով:

Ամսական տեղումների քանակը ապրիլին Տավուշում կազմել է նորմայի 23-43%, Լոռիում՝ 23-27%, Սյունիքում՝ նախալեռնային շրջաններում՝ 51-76%, հովտային շրջաններում՝ 86-94%, Գեղարքունիքում՝ 24-65%, Շիրակում՝ 7-33%, Վայոց ձորում՝ 19-41%, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 15-33%, նախալեռնային շրջաններում՝ 11-12%, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ 17-21%, նախալեռնային շրջաններում՝ 15-32%, Արմավիրում՝ 37-38%, Արարատում՝ 29-53%, Երևանում՝ 32-56%:



Նկար 4. Տեղումների քանակն և շեղումը բազմամյա միջինից (նորմա՝ 1991-2020թթ.) ապրիլին

Ապրիլի 1-4-ին, 12-13-ին, 16-18-ին, 24-30-ին դիտվել է առանց տեղումների եղանակ: Ապրիլի 5-ին, 8-9-ին, 14-15-ին, 19-20-ին, 21-23-ին առանձին շրջաններում, ապրիլի 6-7-ին, 10-11-ին շրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ:




Գծապատկեր 14. Տեղումներ, ապրիլ 2024թ. (նորմա՝ 1991-2020թթ.)

Աղյուսակ 2. Վտանգավոր օդերևութաբանական երևույթներ, 2024թ. ապրիլ

Մարզ / օդերևութաբանական կայան	Դիտման օրը(երք)	Երևույթի անվանումը	Բնութագիրը	Չափանիշը/ Չափորոշիչը	Փաստացի
Արագածոտն/Ամբերդ	10	Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	50մ
Տավուշ/Իջևան	19	Ուժեղ քամի	Արագություն	≥25մ/վ	30մ/վ

Մայիս


2024թ. մայիսին օդի ամսական միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում եղել է նորմայից ցածր մինչև 1 աստիճան:



Նկար 5. Միջին ամսական ջերմաստիճանները և նրանց շեղումները նորմայից (նորմա՝ 1991-2020թթ.) մայիսին


Մայիս ամսվա միջին տասնօրյակային ջերմաստիճանը առաջին և երրորդ տասնօրյակներում եղել է նորմային մոտ մի փոքր դրական ու բացասական շեղումներով, երկրորդ տասնօրյակում նորայից ցածր՝ 2-3 աստիճանով:

Ամսական տեղումների քանակը մայիսին Տավուշում կազմել է նորմայի 169-269%, Լոռիում՝ 210-254%, Սյունիքում՝ նախալեռնային շրջաններում՝ 120-127%, հովտային շրջաններում՝ 160-182%, Գեղարքունիքում՝ 137-222%, Շիրակում՝ 186-230%, Վայոց ձորում՝ 131-175%, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 185-230%, նախալեռնային շրջաններում՝ 277%, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ 205-239%, նախալեռնային շրջաններում՝ 192-229%, Արմավիրում՝ 152-153%, Արարատում՝ 127-162%, Երևանում՝ 205-259%:



Նկար 6. Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից (նորմա՝ 1991-2020թթ.) մայիսին

Մայիսի 1-2-ին, 18-23-ին, 27-31-ին առանձին շրջաններում, մայիսի 3-17-ին, 24-26-ին շրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ:




Պատկեր 15. Տեղումներ, մայիս 2024թ. (նորմա՝ 1991-2020թթ.)

Աղյուսակ 3. Վտանգավոր օդերևութաբանական երևույթներ, 2024թ. մայիս

Մարզ / օդերևութաբանական կայան	Դիտման օրը(երը)	Երևույթի անվանումը	Բնութագիրը	Զափանիշը/ Զափոքոշիշը	Փաստացի	
Արագածոտն/Ամբերդ	3	Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	50մ	
Շիրակ/Աշոց	4	Ուժեղ անձրև	Բնտենսիվություն	≥50մմ/48ժամ	51.2մմ	
Արմավիր/Արմավիր		Ուժեղ կարկուտ	Տրամագիծ	≥10մմ	10մմ	
Արագածոտն/Թային		Ուժեղ կարկուտ	Տրամագիծ	≥10մմ	10մմ	
Կոտայք/Հրազդան	5	Ուժեղ կարկուտ	Տրամագիծ	≥10մմ	10մմ	
Կոտայք/Ֆանտան		Ուժեղ կարկուտ	Տրամագիծ	≥10մմ	14մմ	
Երևան/Աեռոյոզիական		Ուժեղ կարկուտ	Տրամագիծ	≥10մմ	14մմ	
Շիրակ/Արթիկ	7	Ուժեղ անձրև	Բնտենսիվություն	≥30մմ/12ժամ	30.2մմ	
Արագածոտն/Թային		Ուժեղ կարկուտ	Տրամագիծ	≥10մմ	10մմ	
Արագածոտն/Թային		Ուժեղ անձրև	Բնտենսիվություն	≥30մմ/12ժամ	34.4մմ	
Շիրակ/Աշոց	12	Ուժեղ կարկուտ	Տրամագիծ	≥10մմ	17մմ	
Տավուշ/Իջևան		Ուժեղ կարկուտ	Տրամագիծ	≥10մմ	15մմ	
Շիրակ/Գյումրի		Ուժեղ կարկուտ	Տրամագիծ	≥10մմ	13մմ	
Երևան/Մերձավան		Ուժեղ կարկուտ	Տրամագիծ	≥10մմ	12մմ	
Կոտայք/Ֆանտան		Ուժեղ կարկուտ	Տրամագիծ	≥10մմ	13մմ	
Լոռի/Վանաձոր		Ուժեղ կարկուտ	Տրամագիծ	≥10մմ	18մմ	
Գեղարքունիք/Մարտունի		Ուժեղ կարկուտ	Տրամագիծ	≥10մմ	11մմ	
Շիրակ/Գյումրի		Ուժեղ կարկուտ	Տրամագիծ	≥10մմ	10մմ	
Սյունիք/Կապան		14	Ուժեղ անձրև	Բնտենսիվություն	≥30մմ/12ժամ	34.8մմ
Արարատ/Արարատ		24	Ուժեղ կարկուտ	Տրամագիծ	≥10մմ	12մմ
Արմավիր/Արմավիր	25	Ուժեղ կարկուտ	Տրամագիծ	≥10մմ	10մմ	
Կոտայք/Հրազդան		Ուժեղ կարկուտ	Տրամագիծ	≥10մմ	10մմ	
Տավուշ/Բագրատաշեն	26	Ուժեղ անձրև	Բնտենսիվություն	≥30մմ/12ժամ	45.2մմ	
Տավուշ/Դիլիջան		Ուժեղ անձրև	Բնտենսիվություն	≥30մմ/12ժամ	35.4մմ	
Լոռի/Օձուն		Ուժեղ անձրև	Բնտենսիվություն	≥30մմ/12ժամ	38.2մմ	
Գեղարքունիք/Մեմյոնովկա		Ուժեղ անձրև	Բնտենսիվություն	≥30մմ/12ժամ	45.2մմ	
Լոռի/Տաշիր		Ուժեղ անձրև	Բնտենսիվություն	≥30մմ/12ժամ	35.0մմ	
Արագածոտն/Ապարան		Ուժեղ անձրև	Բնտենսիվություն	≥30մմ/12ժամ	30.2մմ	
Շիրակ/Գյումրի	27	Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	50մ	
Գեղարքունիք/Մարիկ	31	Ուժեղ կարկուտ	Տրամագիծ	≥10մմ	30մմ	

Հունիս


2024թ. հունիսին օդի ամսական միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում եղել է նորմայից բարձր 1-2 աստիճանով:



Նկար 7. Միջին ամսական ջերմաստիճանները և նրանց շեղումները նորմայից (նորմա՝ 1991-2020թթ.) հունիսին


Հունիս ամսվա միջին տասնօրյակային ջերմաստիճանը առաջին և երկրորդ տասնօրյակներում եղել է նորայից բարձր՝ 2-3 աստիճանով, երրորդ տասնօրյակում՝ նորմայի սահմաններում մի փոքր դրական ու բացասական շեղումներով:

Ամսական տեղումների քանակը հունիսին Տավուշում կազմել է նորմայի 54-126%, Լոռիում՝ 75-106%, Սյունիքում՝ նախալեռնային շրջաններում՝ 132-136%, հովտային շրջաններում՝ 114-132%, Գեղարքունիքում՝ 63-187%, Շիրակում՝ 29-35%, Վայոց ձորում՝ 44-89%, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 43-56%, նախալեռնային շրջաններում՝ 38-39%, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ 37-95%, նախալեռնային շրջաններում՝ 42-61%, Արմավիրում՝ 46-47%, Արարատում՝ 96-126%, Երևանում՝ 44-67%:



Նկար 8. Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից (նորմա՝ 1991-2020թթ.) հունիսին

Ողջ ամսվա ընթացքում հանրապետության առանձին շրջաններում (բացառությամբ հունիսի 5-6-ին, 28-ին՝ առանց տեղումների) հունիսի 8-10-ին, 21-ին, 26-ին, 30-ին շրջանների զգալի մասում դիտվել է անձրև, առանձին հատվածներում՝ ինտենսիվ: Առանձին հատվածներում դիտվել է նաև կարկուտ:



Պատկեր 16. Տեղումներ, հունիս 2024թ.

Աղյուսակ 4. Վտանգավոր օդերևութաբանական երևույթներ, 2024թ. հունիս

Մարզ / օդերևութաբանական կայան	Դիտման օրը(երբ)	Երևույթի անվանումը	Բնութագիրը	Զափանիշը/ Զափորոշիչը	Փաստացի
Լոռի/Ստեփանավան	7	Ուժեղ անձրև	Բնտենսիվություն	≥30մմ/12ժամ	36.0մմ
Լոռի/Պուշկինի 1-ցք		Ուժեղ անձրև	Բնտենսիվություն	≥30մմ/12ժամ	45.2մմ
Լոռի/Ստեփանավան		Ուժեղ կարկուտ	Տրամագիծ	≥10մմ	19մմ
Լոռի/Պուշկինի 1-ցք		Ուժեղ կարկուտ	Տրամագիծ	≥10մմ	15մմ
Գեղարքունիք/Սևան	8	Ուժեղ կարկուտ	Տրամագիծ	≥10մմ	30մմ
Գեղարքունիք/Մասրիկ		Ուժեղ կարկուտ	Տրամագիծ	≥10մմ	13մմ
Տավուշ/Իջևան	10	Ուժեղ քամի	Արագություն	≥25մ/վ	25մ/վ
Լոռի/Տաշիր	11	Ուժեղ անձրև	Բնտենսիվություն	≥30մմ/12ժամ	30.5մմ
Լոռի/Տաշիր		Ուժեղ կարկուտ	Տրամագիծ	≥10մմ	16մմ
Գեղարքունիք/Սեմյոնովկա		Ուժեղ անձրև	Բնտենսիվություն	≥30մմ/12ժամ	69.8մմ
Գեղարքունիք/Սեմյոնովկա		Ուժեղ կարկուտ	Տրամագիծ	≥10մմ	16մմ
Սյունիք/Գորիս	13	Ուժեղ կարկուտ	Տրամագիծ	≥10մմ	19մմ
Գեղարքունիք/Սեմյոնովկա	16	Ուժեղ կարկուտ	Տրամագիծ	≥10մմ	12մմ
Լոռի/Օձուն		Ուժեղ կարկուտ	Տրամագիծ	≥10մմ	20մմ
Գեղարքունիք/Սեմյոնովկա		Ուժեղ կարկուտ	Տրամագիծ	≥10մմ	13մմ
Լոռի/Ստեփանավան		Ուժեղ կարկուտ	Տրամագիծ	≥10մմ	19մմ
Տավուշ/Բազրատաշեն	20	Ուժեղ քամի	Արագություն	≥25մ/վ	30մ/վ
Լոռի/Վանաձոր		Ուժեղ քամի	Արագություն	≥25մ/վ	25մ/վ
Լոռի/Օձուն		Ուժեղ քամի	Արագություն	≥25մ/վ	25մ/վ
Տավուշ/Դիլիջան		Ուժեղ կարկուտ	Տրամագիծ	≥10մմ	18մմ
Տավուշ/Իջևան		Ուժեղ քամի	Արագություն	≥25մ/վ	35մ/վ
Արագածոտն/Ամբերդ	27	Ուժեղ քամի	Արագություն	≥25մ/վ	35մ/վ

3. ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՂԻ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Մթնոլորտային օդի աղտոտումը կարող է լինել բնական և մարդածին: Աղտոտման պատճառներ կարող են հանդիսանալ՝


- վառելիքի այրումը (էլեկտրաէներգիայի արտադրություն, տրանսպորտ, արդյունաբերություն և տնային տնտեսություններ),
- արդյունաբերական արտանետումները, լուծիչների օգտագործումը, օրինակ՝ քիմիական և հանքարդյունաբերության ոլորտում,
- գյուղատնտեսությունը,
- թափոնների բաց այրումը,
- բնական աղբյուրների, ներառյալ հրաբխային ժայթքումների, լեռնային փոշու տարածումը, բույսերից ցնդող օրգանական միացությունների արտանետումները և այլն:

Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ, որոնք իրենց մեջ պարունակում են ծանր մետաղներ:

Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակություններն որոշելու համար 2024 թվականի 2-րդ եռամսյակում մթնոլորտային օդի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է 15 անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայան և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետ: Քաղաքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների բաշխվածության քարտեզները հասանելի են www.meteomonitoring.am ինտերնետային կայքում:

2024 թվականի 2-րդ եռամսյակում մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան գերազանցել է ՄԹԿ-ն. Երևանում՝ ապրիլ ամսին, Գյումրիում՝ ապրիլ և մայիս ամսներին, Վանաձորում՝ ապրիլ և հունիս ամսներին, Ալավերդիում՝ հունիսին, Հրազդանում՝ ապրիլին, Արարատում՝ ապրիլ և մայիս ամիսներին:


Փոշով աղտոտվածությունը կարող է առաջանալ արդյունաբերական գործընթացների, տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինարարության, գյուղատնտեսական և այլ գործողությունների հետևանքով:



Գծապատկեր 17. Մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիայի փոփոխություններն ըստ քաղաքների

2024 թվականի 2-րդ եռամսյակում քաղաքների մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ն:


Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի առաջացման գլխավոր աղբյուրն ավտոտրանսպորտն է:



Գծապատկեր 18. Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի կոնցենտրացիայի փոփոխություններն ըստ քաղաքների

2024 թվականի 2-րդ եռամսյակում քաղաքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ն:

Ծծմբի երկօքսիդը մթնոլորտային օդում առաջանում է ծծումբ պարունակող վառելիքների այրման, ինչպես նաև արդյունաբերական գործընթացների ժամանակ:





Գծապատկեր 19. Մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիայի փոփոխություններն ըստ քաղաքների

Երևան


Երևան քաղաքում կատարվում են փոշու*, ծծմբի երկօքսիդի**, ազոտի երկօքսիդի, և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 45 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան:

2024 թվականի 2-րդ եռամսյակում Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան ապրիլ ամսին գերազանցել է համապատասխան ՄԹԿ-ն 1.1 անգամ:


Ազոտի երկօքսիդի և ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները:



*կախված մասնիկներ
**անհիդրիդ ծծմբային






Գծապատկեր 15. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 22. Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները


Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO₂) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը





Պարտառու կոնս նշաններ

- Պասիվ նմուշառման դիտակ էտեր
- Ակտիվ նմուշառման դիտակ պաններ
- Գետային ցանց
- Ճանապարհներ և փողոցներ
- Երկաթգծեր
- Երևանի վարչական շրջաններ







Մծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մկգ/մ³)




Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը



Պարենաուկան նշաններ

-  Պասիվ նմուշառման դիտակետեր
-  Ակտիվ նմուշառման դիտակայաններ
-  Գետային ցանց
-  Ճանապարհներ և փողոցներ
-  Երկաթգծեր
-  Երևանի վարչական շրջաններ

Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ($\mu\text{g}/\text{m}^3$)




Գյումրի


Գյումրի քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է մեկ անշարժ դիտակայան և 24 շարժական դիտակետ:

Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան ապրիլ և մայիս ամիսներին գերազանցել է համապատասխան ՍԹ-ն՝ աննշան:


Ազոտի երկօքսիդի և ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹ-ները:



Գծապատկեր 23. Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 24. Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 25. Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները


Վանաձոր

Վանաձոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են երեք անշարժ դիտակայան և 24 շարժական դիտակետ:


Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան ապրիլ ամսին գերազանցել է համապատասխան ՄԹԿ-ն՝ աննշան, իսկ հունիսին՝ 1.1 անգամ: Ազոտի երկօքսիդի և ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները:



Գծապատկեր 26. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները





Գծապատկեր 27. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները











Գծապատկեր 28. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO₂)
միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ




-  Պասիվ նմուշառման դիտակետեր
-  Ակտիվ նմուշառման դիտակայաններ
-  Գետային ցանց
-  Ճանապարհներ և փողոցներ
-  Միջպետական ճանապարհ
-  Երկաթգծեր
-  Բնակավայրեր










Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մկգ/մ³)




**Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO₂)
միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը**



Պայմանական նշաններ

-  Պասիվ նմուշառման դիտակետեր
-  Ակտիվ նմուշառման դիտակայաններ
-  Գետային ցանց
-  Ճանապարհներ և փողոցներ
-  Միջպետական ճանապարհ
-  Երկաթգծեր
-  Բնակավայրեր

Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մկգ/մ³)




Ալավերդի


Ալավերդի քաղաքում և հարակից համայնքներում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Գործում են երեք անշարժ դիտակայան և 42 շարժական դիտակետ:

Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան հունիս ամսին գերազանցել է համապատասխան ՍԹԿ-ն 1.2 անգամ:


Ազոտի երկօքսիդի և ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 29. Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոխադրումները





Գծապատկեր 30. Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոխադրումները











Գծապատկեր 31. Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոխադրումները

Ալավերդի քաղաքի և հարակից համայնքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO₂) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պարբանակա նշաններ




-  Պասիվ նմուշառման դիտակետեր
-  Ակտիվ նմուշառման դիտակայաններ
-  Գետային ցանց
-  Ճանապարհներ և փողոցներ
-  Միջպետական ճանապարհ
-  Երկաթգծեր
-  Բնակավայրեր










Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մկգ/մ³)




Ալավերդի քաղաքի և հարակից համայնքների մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO₂) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը



Պարմա նախա և նշաններ

-  Պասիվ նմուշառման դիտակետեր
-  Ակտիվ նմուշառման դիտակայաններ
-  Գետային ցանց
-  Ճանապարհներ և փողոցներ
-  Միջպետական ճանապարհ
-  Երկաթգծեր
-  Բնակավայրեր

Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մկգ/մ³)




Հրազդան


Հրազդան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 17 շարժական դիտակետ:

Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան ապրիլ ամսին գերազանցել է համապատասխան ՄԹԿ-ն 1.1 անգամ:


Ազոտի երկօքսիդի և ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները:



Գծապատկեր 32. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 33. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 34. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ազոտ երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

Արարատ


Արարատ քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 12 շարժական դիտակետ:

Արարատ քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան ապրիլ և մայիս ամսներին գերազանցել է համապատասխան ՍԹԿ-ն 1.1-1.5 անգամ:


Ազոտի երկօքսիդի և ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 35. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 36. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 37. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները


Կապան

Կապան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 11 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

Կապան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 38. Կապան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 39. Կապան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները


Քաջարան

Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 15 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 40. Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 41. Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները


Չարենցավան

Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 10 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 42. Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 43. Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները


Ծաղկածոր

Ծաղկածոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 14 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:


Ծաղկածոր քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները:



Գծապատկեր 44. Ծաղկածոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 45. Ծաղկածոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 46. Ծաղկածոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

Մթնոլորտային տեղումների որակ

2024 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում Ծաղկաձորում իրականացվել է 8 տեղումի նմուշառում: Նմուշներից յուրաքանչյուրում որոշվել է տեղումների որակը բնութագրող 32-ական ցուցանիշ: Որոշված ցուցանիշներից մի մասի կոնցենտրացիաները բերված են Աղյուսակ 4-ում, մնացած ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը կիրառարակվի տարեկան տեղեկագրում:

Աղյուսակ 5. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային տեղումներում որոշ ցուցանիշների կոնցենտրացիաները.


Ամսաթիվ	Ջրածնային ցուցիչ	Էլեկտրահաղորդականություն, մկՍմ/սմ	Սուլֆատ իոն, մգ/լ	Քլորիդ իոն, մգ/լ	Նիտրատ իոն, մգ/լ	Ամոնիում իոն, մգ/լ
06.04.2024	6.3	45.7	6.2	0.4	3.6	2.5
03.05.2024	6.1	16.5	0.7	0.3	0.7	0.4
04.05.2024	6.2	17.0	0.8	0.4	0.6	0.5
12.05.2024	6.1	21.0	1.7	0.2	0.7	0.4
14.05.2024	6.5	17.5	1.4	0.3	1.1	0.4
25.05.2024	6.6	29.1	2.8	0.4	2.4	0.9
26.05.2024	6.6	18.8	1.7	0.3	1.1	0.9
26.06.2026	6.1	16.5	0.7	0.3	0.7	0.4

**Եվրոպայում մեծ տարածությունների վրա օդի աղտոտիչների տարածման
մոնիթորինգի և գնահատման համատեղ ծրագիր**

Մթնոլորտային օդ

Ամբերդի միջազգային կայանում 2024 թվականի 2-րդ եռամսյակում կատարվել են մթնոլորտային օդի և փոշու դիտարկումներ: Մթնոլորտային օդի նմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ամոնիակի և նիտրատ իոնի. իսկ փոշու նմուշներում՝ քլորիդ, նիտրատ, սուլֆատ, ամոնիում իոնների և 21 մետաղների պարունակությունները: Կատարված դիտարկումների վերաբերյալ ընդհանրական տեղեկատվություն կտրվի տարեկան տեղեկագրում:

Ամոնիակի ($ՍԹԿ_{միջ.}=40\text{մկգ/մ}^3$) միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ն:



Գծապատկեր 47. Ամբերդի կայանում ամոնիակի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

Մթնոլորտային տեղումների որակ

